ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
09.02.2026 թ. կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/10
գնման պայմանագրի

ք. Երևան

«02» «05» 2026 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՏԵՍ» և «Երվադա» ՍՊ ընկերությունները (համատեղ) (այսուհետև՝ Կապալառու), որոնք գործում են համաձայն 20.01.2026 թվականի համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի, ի դեմս «ԱՏԵՍ» ՍՊ ընկերության տնօրեն Հ.Մխեյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև կողմեր), ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով 09.02.2026 թվականին կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/10 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.16 կետերը, ինչպես նաև **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման** վարչության գրության կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին

1.Պայմանագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի՝ **Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի N 97 մանկապարտեզի բակի բարեկարգման** աշխատանքների դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել 58543368 (հիսունութ միլիոն հինգ հարյուր քառասուներեք հազար երեք հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

1.2 Հաստատել սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված թիվ 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ***Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Երևանի քաղաքապետարան	«ԱՏԵՍ» ՍՊԸ	«ԵՐՎԱԴԱ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	ք Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ.10/3	ք. Երևան, Արցախի փ. 28/15
ՀՀ ֆինանսների նախարարության	«Ամիոբանկ» ՓԲԸ	<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 1150018019729716	Հ/Հ 1570005353830100
Հ/Հ 900012410743	ՀՎՀՀ 04438168	ՀՎՀՀ 02231092
ՀՎՀՀ 02593108		

Վ.Պապիկյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հ.Մխեյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Մ.Մխեյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
09.02.2026թ. կնքված թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/10 պայմանագրի
«22» 05 » 2026 թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Աշխատանքների անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142/630	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի N 97 մանկապարտեզի բակի բարեկարգման աշխատանքներ	...	...	...	...	26344516	26344516	40980358	40980358	40980358	58543368	58543368	58543368	58543368

Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900012410743
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱՏԵՍ» ՍՊԸ
ք Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ.10/3
«Ամիօբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150018019729716
ՀՎՀՀ 04438168

Հ.Մխեյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԵՐՎԱԴԱ» ՍՊԸ
ք. Երևան, Արցախի փ. 28/15
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570005353830100
ՀՎՀՀ 02231092

Մ.Մխեյան
(ստորագրություն)
Կ.Տ.

AMERIABANK

21.05.2026թ.
O.AB.100.12CIB.PIED.0.16467.26

Բենեֆիցիար՝
Երևանի քաղաքապետարան

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.16467.26
(ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/10 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԱՏԵՍ» ՍՊԸ -ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից 09.02.2026 թ. կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/10 ծածկագրով գնման պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 22,898,305.00 (քսաներկու միլիոն ութ հարյուր իննսունութ հազար երեք հարյուր հինգ) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև 2026 թվականի նոյեմբերի 23-ի օրվան օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 14 ապրիլի 2027թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (vachagan.mejunc@yerevan.am):

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/10 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը,

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝
Սուրեն Քոչարյան

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou

AMERIABANK

21.05.2026թ.
O.AB.100.12CIB.PIED.0.16465.26

Բենեֆիցիար՝
Երևանի քաղաքապետարան

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.16465.26
(ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԱՏԵՍ» ՍՊԸ -ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 09.02.2026 թ. կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/10 գնման պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 7,632,770.00 (յոթ միլիոն վեց հարյուր երեսունհինգ հազար ինը հարյուր տասնվեց) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև 2026 թվականի նոյեմբերի 23-ի օրվան, և ևս 365 օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 14 ապրիլի 2028թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (vachagan.mejunc@yerevan.am):

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

6.1) թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/10 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

6.2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

8.1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

8.2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝
Սուրեն Քոչարյան

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou